# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԸՍՏ ԳԵՏԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԵՎ ՋՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ԸՍՏ ԳԵՏԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԵՎ ՋՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀամաձայնՀայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 19-րդ հոդվածի և«Հայաստանի Հանրապետության ջրիազգայինծրագրիմասին» ՀայաստանիՀանրապետությանօրենքի 5-րդ հոդվածի՝ ՀայաստանիՀանրապետությանկառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել ըստ գետավազանների Հայաստանի Հանրապետության ջրային և ջրատնտեսական հաշվեկշիռների որոշման մեթոդները՝համաձայնհավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին՝ երեքամսյա ժամկետում հաստատել «Ըստ գետավազանների Հայաստանի Հանրապետության ջրային և ջրատնտեսական հաշվեկշիռների որոշման» ուղեցույցը:
3. Ըստ գետավազանների Հայաստանի Հանրապետության ջրային և ջրատնտեսական հաշվեկշիռներըհաշվարկել Ջրավազանային կառավարման պլաների ժամկետներին համաձայն՝ վեց տարվա կտրվածքով:
4. Սույնորոշումնուժիմեջէմտնումպաշտոնականհրապարակմանըհաջորդո ղտասներորդ օրը:

**Հավելված**

**ՀՀկառավարության 201__ թվականի**

**____________-ի N _____-Նորոշման**

**ԸՍՏ ԳԵՏԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԵՎ ՋՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

1. **ՋՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԸ**

Ջրային հաշվեկշիռը գետավազանում որոշվում է մթնոլորտային տեղումների, գումարային գոլորշացման, կլիմայական՝ գետի և խորքային, հոսքերի տարրերի հաշվարկի միջոցով: Գետի հոսքը հաշվարկվում է գետերի վրա ջրաչափական դիտակետերի, իսկ գումարային գոլորշացումը և տեղումները՝ գետավազանի օդերևութաբանական կայանների դիտարկված տվյալների հիման վրա: Խորքային հոսքը հաշվարկվում է կլիմայական և գետային հոսքերի տարբերությանբ:

Տվյալներ չունեցող գետավազանում ջրային հաշվեկշիռը որոշվում է տեղումների, գումարային գոլորշացման և գետի բնական հոսքի մոդուլի կամ շերտի քարտեզների կազմման հիման վրա:

Ջրային հաշվեկշռը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\mathbf{P = Y_{կլ.} + E = Y_{գետ} \pm Y_{խոր.} + E}$$

Որտեղ.

**P** -ը մթնոլորտային տեղումներն են,

**$Y_{կլ.}$**-ը կլիմայական հոսքն է, որը տարանջատվում է գետի բնական և խորքային հոսքերի՝ $Y_{կլ.}= Y_{գետ.} \pm Y_{խորք.}$

**$Y_{գետ}$**- գետի բնական հոսքն է, որը տարանջատվում է մակերևութային և ստորերկրյա հոսքերի՝ $Y_{գետ} = Y_{մակ.} + Y_{ստ.}$,

Գետի բնական հոսքը ($Y_{գետ}$) որոշվում է երկու մեթոդով.

*(1)Ջրաչափական դիտակետերում գետի փաստացի հոսքի բերումը բնականի,*

*(2)Տեղումներ-հոսք կորի միջոցով՝ կիրառելով հետևյալ բանաձևով.*

*$Y_{գետ}$.=(P-0,2S)2/(P+0,8S), որտեղ P –ն տեղումներն են, իսկ S-ը հաշվարկվում է S=25400/CN-254 բանաձևով (CN-ն որոշվում է գետավազանի հողօգտագործման դասի և հողատեսքերի հիման վրա),*

$Y_{խոր.}$- խորքային հոսքն է (խորքային ճանապարհով գետավազան մուտքը կամ ելքը գործող ջրեր),

**E**-ն գումարային գոլորշացումն է:

Ջրային հաշվեկշռի տարրերի հաշվարկվման միավորն է ***մ***$^3$կամ ***մմ***:

## 2. ՋՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԸ

Գետավազանի կամ նրա առանձին հատվածի համար ջրատնտեսական հաշվեկշիռը որոշվում է գետի հոսքի, բնապահպանական թողքի, ջրառի, ջրահեռացման, գետավազանից այլ գետավազան ջրի տեղափոխման, ջրամբարների, լճերի, ձնաբծերի, խոնավ տարածքների, ստորերկրյա ջրերի տարրերի հաշվարկների հիման վրա:

Ջրատնտեսական հաշվեկշիռը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$B=Y_{գետ}-Y_{էկո.} - Y_{ջրառ} \pm Y_{ջրհեռ} +\Delta V \pm T \pm U,$$

որտեղ

**B** –ն հաշվեկշիռն է՝ ջրապահանջի և ջրառաջարկի տարբերությունը, որ ցույց է տալիս գետավազանի կամ դրա առանձին հատվածների ջրային պաշարների ավելցուկը կամ դեֆիցիտը.

$Y_{գետ}$ –ը՝ տվյալ գետահատվածում գետի բնական հոսքն է,

$Y_{էկո.}$–ն՝ տվյալ գետահատվածում էկոհամակարգի պահպանման համար անհրաժեշտ բնապահպանական թողքն է,

$Y_{ջրառ}$ –ն՝ գումարային ջրառն է,

$Y_{ջրհեռ}$ –ն՝ գումարային ջրահեռացումն է,

**ΔV**–ն՝ տվյալ ջրհավաք ավազանի ջրամբարներում և լճերում պահեստավորված ջրի քանակությունն է,

**T**–ն՝ գետավազանից այլ գետավազան ջրի տեղափոխումն է,

**U**–ն՝ տվյալ ջրհավաք ավազանում ստորերկրյա ջրերի ծավալը, եթե ստորերկրյա ջրերը նախատեսված են ջրօգտագործման համար (այն չպետք է գերազանցի տվյալ ջրհավաք ավազանի համար սահմանված օգտագործելի ստորերկրյա ջրերի քանակը):

Ջրատնտեսական հաշվեկշռի տարրերի հաշվարկվման միավորն է ***մ***$^3$կամ ***մմ***: